

ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

ԼՈՒՐԵՐ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔԻՑ

Հայկական հանրագիտարան.— Հայկական հանրագիտարան ստեղծելու հարցը վաղուց է դարձել Հայաստանի գիտությունների ակադեմիայի և մեր գիտական հասարակայնության ուշադրության առարկան: Ներկայիս այդ հարցը արդեն գործնական ձև է ընդունել և գտնվում է վերջնական լուծման ճանապարհին:

Կազմված է հանրագիտարանի գլխավոր խմբագրություն ակադեմիկոս Վ. Համբարձումյանի նախագահությամբ: Խմբագրական մարմնի մեջ մտել են ականավոր գիտնականներ, արվեստի և գրականության գործիչներ: Ստեղծվված են ենթախմբագրություններ՝ գիտության և արվեստի տարբեր բնագավառների համար:

Բազմահատոր այդ աշխատությունը գլուխ բերելու համար, գլխավոր խմբագրությունը կուտակում է նյութեր հայ ժողովրդի պատմության, տնտեսության, գիտության և մշակույթի զարգացման վերաբերյալ: Հանրագիտարանին կաշխատակցեն մեր նշանավոր գիտնականները, արվեստի և գրականության մասնագետները, մշակույթի գործիչները:

Սովետահայ գրականության պատմություն.— Գիտությունների ակադեմիայի գրականության ինստիտուտը պատրաստել է և հրատարակել «Սովետահայ գրականության պատմություն» երկհատորանոց ստվար աշխատությունը: Վերջերս լույս տեսավ այդ արժեքավոր աշխատության երկրորդ հատորը, որն ընդգրկում է սովետահայ գրականությունը 1941—1964 թվականների ժամանակաշրջանում: Հատորում հանգամանորեն վերլուծված են ժամանակակից մեր բոլոր գրողների ստեղծագործությունները:

Հովհաննես Դրասխանակերտցու աշխատությունը վրացերեն լեզվով.— Վրաստանի գիտությունների ակադեմիան վերջերս լույս է ընծայել Հովհաննես Դրասխանակերտցու «Հայոց պատմություն»-ը վրացերեն և գրաբար լեզուներով:

Հովհաննես Դրասխանակերտցին ապրել է Թ—Ժ դարերում: Նրա աշխատությունն ընդգրկում է 786—925 թվականներին Հայաստանում տեղի ունեցած դեպքերը: Աշխատությունն իր մեջ հետաքրքրական տեղեկություններ է պարունակում նաև Վրաստանի մասին:

Գիրքն ունի ընդարձակ նախաբան և ծանոթագրություններ, որոնք վերլուծում են Դրասխանակերտցու աշխատությունը և նշում, թե ի՛նչ նշանակություն ունի այդ աշխատությունը հին Հայաստանի պատմության ուսումնասիրության տեսակետից: Թարգմանության գլխավոր խմբագիրն է ակադեմիկոս Գ. Ծերեթելին: Հայերեն աղբյուրների խմբագիրն է Ի. Աբուլաձեն:

Հայ բանաստեղծության հատընտիրը լեհերեն.— Լեհաստանում վերջերս լույս են տեսել «Սասունցի Դավիթ» Էպոսն ու Եղիշե Չարենցի բանաստեղծությունների ժողովածուն: Մեր լեհ բարեկամներն այժմ հրատարակության են պատրաստում հայ բանաստեղծության հատընտիրը, որն ամփոփելու է մեր բանաստեղծական ստեղծագործության լավագույն նմուշները՝ հնագույն ժամանակներից մինչև Սայաթ-Նովա: Հայաստանի սովետական գրողների միության վարչության նախագահության վերջերս Երևանում տեղի ունեցած նիստում ընտրվեց հանձնաժողով Հրաչյա Հովհաննիսյանի նախագահությամբ: Հանձնաժողովի կազմի մեջ են Ս. Զորյանը, Կ. Մելիք-Օհանջանյանը, Ա. Մնացականյանը, Պ. Սևակը և Վ. Նալբանդյանը:

Հայկական նոր բալետ.— Հայ բալետային երաժշտության ցանկը հարստացավ մի նոր գործով: Վերջերս Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպե-

ոյի և բալետի պետական թատրոնը բեմադրեց Էդգար Հովհաննիսյանի «Հավերժական կուռք» բալետը, որի հիմքում մեծ սիրո լեգենդն է, Ապոլոնի և Բյուրատի սիրո հաղթանակը:

«Հայկական հարցը» և միջազգային դիվանագիտությունը.— Երևանի պետական համալսարանի «Միտք» հրատարակչությունը լույս է ընծայել Աղասի Եսայանի «Հայկական հարցը» և «միջազգային դիվանագիտությունը» խորագիրը կրող աշխատությունը: Այն մեկնաբանում է 20-րդ դարի առաջին քառորդում հայ ժողովրդի ճակատագրին վերաբերող խնդիրները՝ կապված պատմական և համաշխարհային նշանակություն ունեցող անցքերի հետ, քննարկում է «Հայերի գենոցիտը և միջազգային դիվանագիտությունը», «Հայկական հարցը» և Ազգերի լիգան», «Հայկական հարցը» և Սովետական Ռուսաստանի հաշտարարական դերը Մերձավոր Արևելքում ու Անդրկովկասում» հարցերը: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին «Հայկական հարց»-ի նկատմամբ արևմտյան մեծ տերությունների անտարբեր վերաբերմունքով է բացատրում հեղինակը բախտի այն դառն խաղը, որ վիճակվեց հայ ժողովրդի արևմտյան հատվածին:

Նվերներ շեքսպիրագիտական գրադարանին.— Օրեցօր ավելանում է Հայաստանի գիտությունների ակադեմիայի արվեստի ինստիտուտին կից հիմնադրված շեքսպիրագիտական գրադարանի նվիրատու անձանց ցանկը:

Ամերիկայի Միացյալ Նահանգների Էվանստոն քաղաքից Սուրեն Սարգսյանը վերջերս ուղարկել էր Շեքսպիրի երկերի դարասկզբին հրատարակված 40 հատորանոց արժեքավոր ժողովածուն:

Վերջերս Սիդնեյանայության հետ մշակութային կապի կոմիտեի հացեով ստացվեց այդ ժողովածուն, որի մեջ ընդգրկված են մեծ դրամատուրգի բոլոր նշանավոր ստեղծագործությունները:

Շեքսպիրագիտական թանգարանին արժեքավոր գրքեր է ուղարկել նաև Տ. Բաբգեն եպիսկոպոս Վարժապետյանը՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների Վինդսոր քաղաքից:

Պատմական հուշարձանի փոխադրումը.—Ավարտված է Ապարանի ինշոր ջրանցքի պատնեշի կառուցումը: Քասաղի ջրերը արագորեն կուտակվում են, ողողելով շրջակայքը: Շուտով Զովունի գյուղը կմնա ջրի տակ: Ջրամբարից հեռու կառուցվում է նոր գյուղ, ուր պետք է տեղափոխվեն Զովունու բնակիչները:

Բայց ինչպե՞ս վարվել գյուղի եկեղեցու հետ, որը Ն դարի հուշարձան է: Եկեղեցին կոչվում է Թուխ Մանուկ, բավական մեծ է և գրավում է շուրջ 200 քառակուսի մետր տարածություն:

Պատմական հուշարձանների պահպանության կոմիտեն և գիտությունների ակադեմիայի հնագիտության ինստիտուտը համատեղ ուժերով ձեռնամուխ են եղել պատմական այդ եկեղեցին փրկելու: Որոշված է եկեղեցին քանդել և տեղափոխել գյուղի դիմացի բարձրադիր բլրի վրա: Այս նպատակով շենքի բոլոր քարերը չափագրվում են, պեղումներ են կատարվում եկեղեցու ներսը և դուրսը: Պեղումների ժամանակ հայտնաբերվել են մի շարք արժեքավոր առարկաներ:

Պատմական թանգարանը հարստանում է՝ նոր նյութերով.—Վերջերս Հայաստանի պետական պատմական թանգարանը հարստացավ նոր, արժեքավոր նյութերով, որոնք կարևոր նշանակություն ունեն հայ ժողովրդի նյութական մշակույթի ուսումնասիրության տեսակետից: Անցյալ 1965 թվականի ընթացքում ձեռք են բերվել շուրջ 500 կտոր զանազան տեսակի իրեր: Դրանց մի զգալի մասը իրենց հետ բերել էին Սուրիայից ներգաղթած մուսալեռցի հայերը: Իրերի մեծ մասը ազգագրական բնույթ ունեն՝ հագուստներ, աշխատանքի և տնային գործածության առարկաներ ու գործիքներ:

Պատմական արժեք ներկայացնող կենցաղային և ազգագրական բնույթի իրեր են ձեռք բերված Արմավիրի (Հյուսիսային Կովկաս), Նոր Նախիջևանի, ինչպես նաև Ճախկին ալաշկերտցի և վասպուրականցի հայերից:

Թանգարանի համար նետաքրքրական նմուշներ են ուղարկել Ամերիկայի Միացյալ Նահանգների, Ֆրանսիայի, Իրանի և Բուլղարիայի հայերը: Նմուշների մեջ կա մի համրիչ (թազբեհ), որը պատկանել է պոլսեցի մտավորական Վարդերես Աթանասյանին: Համրիչը բաղկացած է 99 կարմիր ուլունքներից: 1915 թվականին, երբ Վ. Աթանասյանը պոլսահայ մտավորականների հետ գոնվիլիս է եղել Զանգեզուրի բանտում, նա իր համրիչի յուրաքանչյուր հատիկի վրա փորագրել է հայ կալանավորների՝ այդ թվում Կոմիտասի, Վարուժանի և մյուսների անունները:

Երևանի նոր հատակագիծը.— 1924 թվականին ճարտարապետ ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանը կազմեց Երևանի առաջին հատակագիծը: Այն ժամանակ քաղաքն ուներ 50 000 բնակիչ: Ա. Թամանյանի կազմած հատակագիծը նախատեսում էր Երևանի առավել զարգացումը. այն պիտի ունենար 150 000 բնակիչ:

Անցավ 14 տարի և այդ թիվը գրեթե կրկնապատկվեց: 1938 թվականին կազմվեց մայրաքաղաքի նոր հատակագիծ, որը նույնպես կարճ ժամանակաշրջանում կորցրեց իր կարևորությունը և անկարող եղավ բավարարել մայրաքաղաքի բուռն աճման պահանջներին: 1948 թվականին կազմվեց մի նոր հատակագիծ, ըստ որի նախատեսվում էր 1965 թվականին Երևանի բնակչության թիվը հասցնել 450 000-ի:

Ներկայիս Երևանն ունի շուրջ 700 000 բնակչություն: Պարզ է, որ վերջին հատակագիծը ևս իր նշանակությունը վաղուց կորցրել է: Մի քանի տարի է, ինչ կազմվում էր մայրաքաղաքի զարգացման հատակագիծ-նախագիծը 15 տարվա համար՝ 1965-ից մինչև 1980 թվականը: Հատակագիծը վեր-

ջևրս քննության առնվեց Երևանում՝ ՍՍՌՄ Պետշինի ճարտարապետական կոմիտեի և Հայաստանի պետշինի համատեղ նիստում ու արժանացավ միահամուռ հավանության:

Ըստ նոր հատակագծի, հեռանկարում Երևանի բնակչությունը կհասնի 1 000 000-ի: Քաղաքը կունենա 9 շրջան, որոնք իրար հետ կկապվեն լայն երթուղիներով: Կենտրոնական մասերը կկառուցապատվեն բարձրաբերձ շենքերով, որոնք կկազմեն կառուցվելիք շենքերի կեսը: Քաղաքը հիմնականում կտարածվի դեպի հարավ-արևմուտք՝ Հրազդանի աջ ափով: Ամբողջովին կվերակառուցվի քաղաքի կենտրոնական մասը:

Հրազդանի ձորի վրա կկառուցվի նոր կամուրջ: Բացի մի քանի ճոպանուղիներից (Նորք, Ծիծեռնակաբերդ և այլն), Թամանյան փողոցի վերջավորությանը կկառուցվի ինքնաշարժ ելարան (էսկալատոր), որը քաղաքի կենտրոնը կմիացնի Հաղթանակի զբոսայգու և Թբիլիսյան պողոտայի հետ:

Հրազդանի ձորը կդառնա հանգստավայր: Այնտեղ կստեղծվեն 150 հեկտար տարածությամբ նոր զբոսայգիներ: Առաջիկա 15 տարում քաղաքի կանաչապատված տարածությունները կկազմեն 8 000 հեկտար: Հրազդան գետի, Գետառի, Նորքի և Արտաշատի ջրանցքների վրա կստեղծվեն նոր լճեր (բացի «Երևանյան ծով»-ից), որոնք կնպաստեն քաղաքի կլիմայի մեղմացմանն: Քաղաքի հյուսիսային մասում կկառուցվեն հանգստավայրեր: Կընդարձակվի հասարակական սննդի, մշակույթի, կենցաղային սպասարկության հաստատությունների թիվը:

Հայաստանի բնակչությունը.— Կենտրոնական վիճակագրության տվյալների համաձայն, առ 1-ը հունվարի 1966 թվականի Սովետական Հայաստանի բնակչության ընդհանուր թիվը կազմում էր 2 200 000 մարդ: 1827-ից մինչև 1920-ը Երևանի բնակչությունը աճել է 4 անգամ, իսկ վերջին 44 տարում, 1920—1964-ին՝ 12 անգամ:

Ուսումը Հայաստանում.— Անցյալ 1965 թվականին Հայաստանի հանրակրթական դպրոցներում սովորողների ընդհանուր թիվը եղել է 529 300 հոգի, կամ 37 500-ով ավելի քան 1964 թվականին:

Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող ուսանողների թիվը կազմել է 88 929 հոգի, իսկ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ 31 881 հոգի:

Պերճախոս թվեր.— Ծանր արդյունաբերության հետ միասին Հայաստանում արագորեն զարգանում է նաև թեթև արդյունաբերությունը: Այդ մասին են վկայում ստորև բերված թվերը:

Անցած 1965 թվականին Հայաստանի գործարաններում արտադրված է.

Գործվածքեղեն, 82 700 000 քառակուսի մետր, որից շուրջ 70 000 000 բամբակե գործվածքեղեն.

Պատրաստի հագուստեղեն, 64 000 000 ռուբլու արժողությամբ.

Վերին և ներքին տրիկոտաժեղեն, 42 000 000 կտոր.

Կանացի և տղամարդկանց գուլպաներ, 49 200 000 զույգ.

Կոշիկ կաշվից, 7 300 000 զույգ.

Շաքարավազ, 32 900 տոննա.

Օճառ, 19 300 տոննա.

Ժամացույցներ զանազան, 2 783 000 հատ:

Վերոհիշյալ ապրանքներից 1965 թվականին արտադրված է 6-ից մինչև 47 տոկոս ավելի, քան 1964 թվականին:

Երևանյան նոր ջրմուղ.— Վերջին 15 տարում Երևանի ջրմուղի հզորությունը գրեթե եռապատկվել է, սակայն քաղաքը նորեն ջրի պակաս է զգում: Քաղաքի բնակչության աճի հետ միասին ավելանում է նաև ջրի պահանջը: Բայց դա ջրի սակավության հիմնական պատճառը չէ:

Պատճառն այն է, որ մայրաքաղաքի ջրմուղի ջրի երկու երրորդը կլանում են գործարանները՝ արտադրական ու տեխնիկական կարիքների համար: Այս բացը վերացնելու նպատակով քաղաքային իշխանությունները կառուցում են նոր ջրմուղ հատկապես գործարանների կարիքների համար: Նոր ջրմուղը սկիզբ է առնելու Կապույտ լճից, որը գտնվում է մայրաքաղաքից 18—20 կիլոմետր դեպի հարավ-արևմուտք, Արարատյան դաշտում:

Այս լիճը գոյացել է բնական այբյուրներից: Ջուրը լճից դուրս հոսելով առաջացնում է ճախճախուտներ: Սահա այդ դուրս հոսող ջրերն են, որ պետք է օգտագործվեն: Լճի ափին դրվում են 6 հզոր ջրհաններ, որոնք վայրկյանում կարող են մղել 3 000 լիտր ջուր: Դուրս մղված ջուրը արհեստական ճնշման տակ խողովակներով անցնելու է 10—12 կիլոմետր և լճի մակերևույթից բարձրանալու է 200 մետր, որից հետո ինքնամղումով կհոսի դեպի քաղաք, դեպի կարգավորման հսկայական ջրամբարները, որտեղից ջուրը բաշխվելու է գործարաններին:

Նոր ջրմուղի առաջին հերթը պատրաստ կլինի այս տարվա մայիսին:

Փապուղիներ լեռնանցքներում.— Բզովդալի կամ Պուշկինյան լեռնանցքը շուրջ 3 000 մետր բարձրություն ունի: Խճուղային ճանապարհը Կիրովականից սկսվում է և անցնում այդ վտանգավոր լեռնանցքով դեպի Ստեփանավան: Ձմեռը ճանապարհը փակվում է ձյան պատճառով:

Կառավարության որոշմամբ կառուցվելու է ավտոմոբիլային ճանապարհ լեռնանցքի տակով: Դրա համար փորվելու է փապուղի 1 850 մետր երկարությամբ: Փապուղին սկսվելու է Բզովդալ գյուղի մոտ և դուրս է գալու Հերհեր գյուղի մոտերը: Փապուղու շնորհիվ Կիրովական—Ստեփանավան ճանապարհը կկրճատվի 12 կիլոմետրով և երթևեկությունը կդառնա անվտանգ: Կառուցման աշխատանքներն արդեն սկսվել են:

Նախատեսվում է այդպիսի փապուղի կառուցել Ագարակից (Մեղրու շրջան) դեպի Քաջարան (Ղա-

փանի շրջան) տանող ավտոմոբիլային խճուղու վրա։ Փապուղու երկարությունը կլինի 3 300 մետր։

Վիտամինների գործարան Երևանում.— Երևանում սկսվել է մի նոր, հետաքրքրական գործարանի կառուցումը։ Դա վիտամիններ արտադրող գործարանն է։ Այն կլինի խոշորագույններից մեկը Սովետական Միությունում։

Գործարանը թողարկելու է մեծ քանակությամբ զանազան տեսակի վիտամիններ։ Նոր գործարանի համար իբրև հումք կծառայեն ինչպես մյուս հանրապետություններից ներմուծվող նյութերը, այնպես էլ Հայաստանի քիմիական գործարանների արտադրատեսակները։

Կիրովական քաղաքի նոր հատակագիծը.— Հայաստանի պետական շինարարական կոմիտեն վերջերս հաստատեց Կիրովական քաղաքի գլխավոր հատակագիծը, որը կազմված է Հայաստանի պետական նախագծային ինստիտուտի կողմից։

Ըստ նախագծի, քաղաքը կունենա 3 շրջան՝ կենտրոնական, արևելյան և արևմտյան։ Յուրաքանչյուր շրջան կունենա մշակութային-կենցաղային հաստատությունները։ Քաղաքի կենտրոնում կկառուցվեն նոր խոշոր կինոթատրոն, համերգային դահլիճ, մշակույթի պալատ, ծածկած շուկա, հասարակական վաճառատուն և կենցաղային սպասարկության այլ հաստատություններ։ Քաղաքը հիմնականում կառուցապատվելու է 4—5 հարկանի շենքերով, սակայն կկառուցվեն նաև 9—12 հարկանի մի շարք շենքեր։

Մեծ ուշադրություն է դարձվելու քաղաքի կանաչապատմանը։ Յուրաքանչյուր շրջան կունենա իր զբոսայգին և սպորտային հարմարությունները։

Առողջապահական նորակառույցներ.— Առողջապահական գործի բարելավումը Երևանում նոր թափ է ստանում։ Հրազդանի աջ ափին սկսվել է հիվանդանոցային խոշոր լավանի կառուցումը։ Հիվանդանոցային շենքերը կունենան 750 մահճակալ։ Բացի այդ, ավանը կունենա հատուկ բուժարան, առողջարան, ատամնաբուժարան, ուսդիոլոգիայի բաժանմունք։ Ավանի կառուցումը կտևի մի քանի տարի։

Առողջապահական շենքեր են կառուցվում նաև քաղաքի այլ մասերում։ Օրբելու փողոցի վրա կառուցվում է 180 մահճակալով նոր հիվանդանոց, որի առաջին հարկում կլրացվի բուժարան։

Արաբկիրում և Ավանում կառուցվում են արհեստանոց-գործարաններ, որոնցից առաջինը թողարկելու է «Հեմագլոբուլին» դեղը, իսկ երկրորդը արտադրելու է բուժական կահավորանք։

Անվանի կինոռեժիսորի անվան.— Հայ ականավոր կինոռեժիսոր Համո Բեկնազարյանի հիշատակը հավերժացնելու համար, Հայաստանի կառավարության որոշմամբ, «Հայֆիլմ» կինոստուդիան կոչված է նրա անվամբ։ Համո Բեկնազարյանը հայկական կինեմատոգրաֆիայի հիմնադիրներից մեկն է եղել։ Նա եղել է բեմադրիչը այնպիսի հիանալի ֆիլմերի, ինչպիսիք են «Պեպո», «Նամուս», «Զանգեզուր», «Դավիթ բեկ» և այլն։

Հայկական բյուրեղապակի.— Նոր հիմնվող Աբովյան քաղաքից ոչ հեռու կառուցվում է բյուրեղապակու և ընտիր տեսակի ամանեղենի խոշոր գործարան։ Գործարանը տարեկան կթողարկի 30 000 000 կտոր բյուրեղապակյա և այլ տեսակի իրեր։ Իրրև հումք գործածվելու է երևանիտ կոչվող նյութը, որը կմատակարարի Հրազդանի (Ախտալի) ալյագա լեռնաքիմիական գործարանը, նեֆելինային սիենիտների վերամշակման միջոցով։ Մինչ Հրազդանի գործարանի թողարկումը, բյուրեղապակու գործարանն այդ հումքը կստանա քիմիայի ինստիտուտի փորձնական գործարանից։

Գործարանի կառուցման աշխատանքներն ընթանում են հաջող։ Անցյալ 1965 թվականի բոլոր առաջադրանքները շինարարները գերակատարել են։ Նախատեսված բոլոր արտադրական շենքերը կառուցման ընթացքի մեջ են։ Կառուցվում է նաև բանվորական ավան։

Գործարանը պատրաստ կլինի 1967 թվականին։